ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 229/2-2 «07 12 2021թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԳՆԵՐԸ և ԱՄՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի /այսուհետ՝ ԵՊՀ/ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում 31.12.21թ-06.01.22թ ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա) մինչև 3 տարեկան երեխաների համար՝ անվճար
   բ) 3-12 տարեկան երեխաների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
   գ) 12 տարին լրացած անձանց համար՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը (6 գիշեր), երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:

2. ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում 31.12.21թ-02.01.22թ ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա) մինչև 3 տարեկան երեխաների համար՝ անվճար
   բ) 3-12 տարեկան երեխաների համար՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ
   գ) 12 տարին լրացած անձանց համար՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը (2 գիշեր), երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:

3. Սահմանել, որ

ա) Բյուրականի ուսումնաարտադրական բազայում ուղեգրերի ամրագրումը մեկնարկելու է 2021թ. դեկտեմբերի 7-ին և շարունակվելու է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 22-ը:

բ) տեղերի ամրագրման առաջնահերթությունը տրվելու է ավելի վաղ վճարում կատարած ԵՊՀ աշխատակիցներին

գ) ուղեգրերի արժեքը վճարվում է ԵՊՀ բանկային հաշվեհամարին՝ Արարատ բանկ հ/հ 1510001995480500 /AMD/

դ) հայտերը ներկայացնել ԵՊՀ Կենտրոնական մասնաշենք, 506 սենյակ Սաթենիկ Բաբայանին (հեռ.՝ 11-05, 060 710 105, 094 19 80 10)

ե) ուղեգրերի արժեքը վճարած անձանց համար բազայում սենյակների նախնական ամրագրումն իրականացնում է ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավար Դ. Հովհաննիսյանը:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատակիցներին:

ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ.Վ.Հովհաննիսյան